

πνέουματι καὶ σωντι, οὐ γάρ αἰσθοντι. Ἡ βρετανία
ζησογένεια την πατέραν γροντεցήγη, τερεμ, φερ,
17 = ὁ εἶναι μονονοματικός σωντι, "τερεμ, φερ
τεβνητι την πατέραν βρετανίαν ζησοερε πορραφεωλ
ζησογή, Βαρετελ, Ζεγορ., το 86, ποιει
εύναρχην αυτον πολορθήν τερεμ ποιει μηδεγί πυφετός
(= φερμ), Migne, Pat. gr. XXIX,
το 100. ζησοερε πατέραν τεβνητην πλανεωλ
ποιειρέρετι ή ινδιαν, τετελερε. το 4. Φατεμ., το 45,
αυτορήν ποιει μετακανονιζετι Ιδαο, Ιδαο, Ιδαο
(Wright-M^o Lean, The eccl. hist. of
Eusebius, το 39.

ՏՊՐԱԽԵԱՆ. — “Եւ զերեմիա արկին ի գուր
ողմանուն, Զգաւն, էջ 389, ասորին դար-
ձեաւ սեռականով “ի գուր տղմայ = Խօս-
եաց, ” Graffin, Pat. syr. I, էջ 713.

ՅԱՒՂԱԽԵՐՈՆ. — «Ոչ բոյս, ոչ դալրի եւ ոչ
ծաղիկ, ոչ ի ծայրս կաղնեաց բողոք եւ ոչ
երան ց-շահեանց, Ոսկեք. Ճառ վասն Հե-
րովդ. (ՄԵԿՆ. Պաւղ. Բ.) Էջ 618, յայն բնա-
գիւն ունի պարզ օնք ամրա չն ձրօսօց.

ՔԱՂՅՐԱԽԱՐՈՒՆ. — “Զե՞ն ինչ աւգուս հեշտական +ողբարիտառն աւդք դարնան(ւ)ոյ մարմնոյ (տպ. Տ-ը Բանց) որ ի տապօյն գոլանայցէ,”
Ոսկեբ., Սեկն. Ես., էջ 302, “+ողբարիտառն
շնչել աւգուսն զարնան(ւ)ոյ”, Բարսեղ,
Վեցօր. էջ 124, յցնին պարզ “գարունն աւ
(չար) այս ձեւ հայացուցած է թարգմանիչը,
հմանէ վերը “բացախտառն”, եւ “Եղմանիտառն”
բառերը, “+ողբարիտառն բանիք ողպքէ” Եղմանիք, էջ 62: “Զերմն եւ +ողբարիտառն աւգուսէն, անդ, էջ 195 յցնը միայն՝ ալլա
չաւ ձևաւն աւ տն անքա սունեչուսան
ibid., էջ 201. “շնորհեա (մեզ) զաւդս +ողբարիտառն եւ առողջս, “Բարսեղ, Պատարագ,
էջ 148 = εὐχράτονες չաւ էպօփεլεῖς տօնէ
անքա չիմն շարօւտաւ.

S. U. yunnanensis

ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԱՅԵԹ-ՆՈՎԱՅԻ ՄԱՍԻՆ

(C...r...-n...{--fl...-n...)

Գ. Պակասորդ տառեղ:

Ինչպէս տեսանք Գ. Հալիվերդեանի յառաջաբանից՝ Սայաթ Նովայի ձեռագրի մէջ տեղ՝
տեղ պակասել են ձայնաւոր եւ բաղաձայն գրեր։
Մեզ թւում է, որ երգերի բնագիրը կաղմելիս
հրատարակիչը երկու տեղ մոռացել է պակասորդ
գիրն իր տեղը դնել։

1. Այսպէս լի երգի չորրորդ տան մէջ
կարդում ենք.

Խօստովնիս արած միխկըդ, չանիս ինքար,
Սայաթ-Նօվս. Նախ՝ Խօստովնիլու բառ չկայ,
Երկրորդ՝ ոտանսաւորի չափը եւ տողի հատածները
պահանջում են, որ տպուի.

"Խօստովանիս | արած միւսկդ | չանիս
ինքար | Սայաթ-Նովան | :

2. Խերգի վերջի տան մէջ կարդում ենք.
Խղարէմէն շուտ անցկացար ո՞ւր է եարսուն
տարին:

Թէեւ թիֆլիսի բարբառում “երեսունը՝
“եարսունը՝ է, բայց կայ նաեւ “եարասունը
ձեւը. այստեղ չափը եւ տողերի հատածները
պահանջում են, որ ինչ եարասուն . այսպէս”

Իղարեմէն | շուտ անցկացար | ուր է
եարա | սուն տարին |

Դ. Բնագրի սխալ ընթերցում՝ եւ սխալ
պատարձաթիւն;

1. ԽօՏ ԵՐԳԻ ԱԷՅ ԿԱՐԳՈՒՄ ԵՆՔ,

Եշեւէլէղ Խմբած պատութեանք

ԳԼՈՒԽԱ ՄԱՀԻՆ ՎԱԽՄԱ ԷԿԱՃ

Սայաթ-Նովէն իմ տիսու եկած

Աչքի լուս ուր իմ ասի,

Սուր չիմ ասի, զուր չիմ

Տուր չիմ ասի...

ԹԱՐԱՎԻ Ե

պէտք է, որ այս հատուածի երկրորդ տողը
պէտք է լինէր. “Գլուխս մահին ռաստ էկած՝
Եղած ձեւով՝ տողն անհասկանալի է եւ յանգն
աղքատ: Հրատարակչի ծանօթութիւնից գիտենք
(ահս էջ 172) որ այս երգը գրուած է եղել
digitised by

“պատուածն թերթի վըայ, ուր “շատ տեղ խկի չէին ջկւում բառերն ու, ուստի կարելի է ենթադրել, որ “ուստ բառի վրացերէն գլութեան մէջ և (ս) եւ Ե (ի) տառերն իրար հետ շփոթուած են եւ սկզբի տառն էլ եղած է “դժւար կարդալու,, Հախվերդեանը ԾԱՅՐ (աստ) կարդացել է ԾԱՅՐ (ախտ) եւ բնական մղումով համարել է “վախտ,, բառը Ենթադրելով, որ “ուստ էկած,, է եւ ոչ “վախտ էկած,, մենք ստանում ենք մի տող, որ ոչ միայն լաւապէս յանդում է նախորդ ու յետնորդ զարկերի “մաստ,, ու “տիսդ,, բառերին, այլ եւ տողին տալիս է որոշ իմաստ: Բանաստեղծն ասում է, “Ես Սայաթ-Նովիչն եմ, որ սիրուցդ հարբած եւ գլուխս մահին հանդիպած՝ եկել եմ քեզ տեսութեան. Հապա ինչո՞ւ համար եմ աչքի լուս անուանել քեզ. ես չեմ ասել, որ զուր տեղը սուր զարկես ինձ,,,: Այս մեկնութիւնը ներդաշնակ է բանաստեղծի միւս երգերի մոքերին եւ տրամադրութեան: Այսպէս օրինակ Ի երգի մէջ սիրեկանն ասում է Սայաթ-Նովային. “Կարեցիր ադաբդ, կտրէցիր ահգ. մի վիթի արունդ, մի շանց տայ մահդո. քիչ առաջ սպառնացել էր նրան “փարա-փարան անել տալ իր մի արարմունքի համար: Իսկ Ըերգի մէջ բանաստեղծն իր սիրածին դիմելով, ասում է.

Թէ էսանց էլ սուչ ունէնամ՝ գլուխս արա տալ, թագալուր. այսինքն, “ո՞վ թագաւոր, եթէ այսուհետեւ յանցանք ունենամ՝ գլուխս կտրել տուրո: Այսպիսի անողոք սիրականի սիրով հարբած նրան տեսութեան գնալ, նոյն է Թէ գլուխս մահին “ուստ բերելո...”

ԽԴ երգի մէջ (էջ 162) կարդում ենք.
Օրն ի օրըն շատանում իս
Էշնի մէջն մօդանում իս
Ալրտի դարդը հիդ անում իս
Հիդ արա, տիս,
Թէ թարիթ իս.

Հայերէն Յ եւ Հ տառերի փոխարէն վրացերէն մէկ չ գործ ածելով՝ բնական է, որ մեր մեր եւ ներ բառերը շփոթութեան տեղիք տային: Այս հատուածի մէջ երկու “հիդ” բառն էլ պէտք էր գրադարձել “յետո” քանի որ “հիդ” անելո ոչինչ չի նշանակում, մինչ դեռ “յիդ” անելո նշանակում է բանալ, կապը քանդել, Բանաստեղծն ասում է, “օրէցօր սրտիս դարդը բաց ես անում. բաց արա, տես, եթէ բժիշկ եսո, Մեզ թւում է նաեւ, որ պէտք է տպագրել”

“սրտիս դարդն յիդ անում իս,, որ քերականորէն աւելի հարազատ ձեւ է եւ յանդի տեսակէտով աւելի ճիշտ, քան անսովոր “սրտի դարդու, ձեւը:

Նոյն կարգի մի ուղղում պէտք է անել եւ ԽԱ երգի Բ տան մէջ, ուր կարդում ենք.

Ամէն մարթ չի կարա մտնի՛ էշնիդ ջուրն հիդ է զալում. Գ. Հախվերդեանը “հիդ է զալում” բառերը տպագրել է նոտր գրով, իբր իրան անհամառալի մի բացատրութիւն: “Հիդ, նշանակում է “հետո, որ այստեղ անիմաստ է. եւ իրօք ի՞նչ է նշանակում “էշնիդ ջուրն հետ է: Պէտք է տպագրել “յետո եւ այն ժամանակ տողը լրիւ իմաստ կը ստանայ, թէեւ մեկնութեան կարօտ:

Կուր գետը Թիֆլիսով անցնելիս Հաւլարի կամուրջի տակ մտնում է մի շատ սեղ կիրծի մէջ, որ ձեւացնում են Մետեխի ամրոցի եւ Մզկիթի հանդիպակաց սեպ քարափները: Գետի ջուրը, մանաւանդ վարար ժամանակ, գժուարութեամբ եւ ահագին աղմուկով հազիւ կարողանում է անցնել այդ սեղ անցքից: Դիպչելով առափնեայ բարձրադրի շենքերի ամուր հիմքերին, որ դրուած են ժայռերի վըայ, գետի ջուրը կատաղըթեամբ յետ է դառնում եւ կազմում է մի զարհուրելի ջրապտոյտ, որին տեղացիք վոաց բառով “մորեւո” են ասում: Զուրը գնալով բարձրանում է եւ ողողում առափնեայ Սաղ կոչուած բաղը, իսկ երբեմն սաեւ հարեւան Սեղ կոչուած բաղը տառապամասերը: “Սեղք-կուիիա եւ Զուղուրէթ քաղաքամասերը: “Սեղք-ստաները լցուում են ջրով, կառք ու ձիաքարը հանգ են առնում եւ փողոցներում շըշում են նաւակներ, ազատելու համար մարդկանց եւ նրանց ինչքը: Թէեւ ամրող տարին ջրի յետ դառնալը եւ “մորեւո” կազմելը շարունակում է, բայց այն չափերին չի հասնում, որ մշտական հեղեղումներ տառաջ բերի: Թիֆլիսի լաւ լող նորդները իրենց շնորհքը ցոյց տալու համար բարձր կամուրջի փայտից նետում են ցած եւ յետ եկող յորձանքի հետ ընկնում են “մորեւո” ի մէջ, որից մէծ ճիգերով հազիւ կարողանում են աղատուել, երբեմն զոհ գնալով իրենց յանդ- գնութեան: Սուազ փորձառու լողնորդի համար “մորեւո” անխուսափելի մահուան գուբ է եւ այս պատճառով ոչ ամենքը կարող եւ յանդգնել “մորեւո” ի մէջ մտնելու: Անցնելով երկու երկաթ կամուրջների տակից, երկումն էլ ձգուած նեղ ու խորին կրծի վըայ ժայռից ժայռ, գետի ջուրը գնում փուռում է Օրթաճալայի համեմատաբար լցոյն տափաստանի մէջ, ոռոգելով Թիֆ-

լիսի այնքան ուրախ այգիները։ Սայաթ-Նովան
իր պատկերն առել է այս տեղից։ «Զալում,
ասում է, քո սէրը չասե՞ս թէ մի գետ է (տես
հետեւեալ տողը), որ իր ջուրը յետ է տալիս
եւ ամէն մարդ չէ կարող մէջը մտնել»։

Ե. Տաղաչափութեան խախտումներ։

Թ. երգի վերջին տան մէջ կարդում ենք.
Սայաթ-Նովէն ասաց. կուլամ. չիմ լաց ըլի
թէ ձար ունէնամ։

Այս տողի չափը «լաց ըլի», ձեւի պատ-
ճառով մի վանկ աւելանում է: Պէտք է տպել
«չիմ լաց'լի» թէ ձար ունէնամ։ ինչպէս նոյն
բառի նոյն ձեւը տպուած է թ. երգի առաջին
տան մէջ։

Դու մի' լաց'լի, ես իմ լալու¹.

Զ. Կէտաղրական ուղղումներ։

Կէտաղրութիւնը գրութեան ոգին է: Հե-
ղնակներ կան, ինչպէս Տուրգենեւ, որ կէտա-
ղրութեան միջոցով կարողանում են սյնքան
տրամադրութիւն եւ կշիռ հաղորդել իրենց
խօսքին, որքան մի հմտւտ ոգով կամ գերասան
իր արտասանած հատուածին։ Կէտաղրական այս
կամ այն նշանի չքացումից կամ տեղափոխու-
թիւնից կախուած է բնագրի այս կամ այն իմաս-
տը, ուստի հին հեղինակների հրատարակու-
թեան այս կողմի վրայ պէտք է շատ լուրջ ուշա-
դրութիւն դարձնել։

Ստորեւ մենք բերում ենք մեր դիտողու-
թիւնները Գ. Հախվերդեանի հրատարակու-
թեան կէտաղրական թերինների մասին, տալով
ընագրական մեկնութիւններ։

1. ԺԴ. երգի Դ տան մէջ կարդում ենք.
Ըափաթն օխտն օրին, ասի, հագածդ բարաթ
բարաթ է։ Այս կէտաղրութեամբ՝ տողի իմաստն
այն է թէ, «ասացի՝ շարաթւան եօթ օրին հա-
գածդ տեսակ-տեսակ է»։ Եթէ այս լիներ բա-
նաստեղծի միտքը, այն ժամանակ իր խօսքը քե-
րականորէն ուղիղ կազմելով՝ պիտի գրեր։ «Ծա-
փաթւան օխտն օրն, ասի, հագածդ բարաթ է»,
քանի որ չեն ասում «կիրակի օրին հագածդ

խաս է, իսկ շաբաթ օրին — խամ», այլ՝
«կիրակի օրլը», «շաբաթ օրլը»։ Մեզ թւում
է, որ այդ տողը պէտք է այսպէս կազմել ու կէ-
տաղրել.

Ըափաթն օխտն օր ին ասի՝ հագածդ բա-
րաթ բարաթ է։ այսինքն. «ասել են, որ շա-
բաթը հօթն օր ունի, ուստի դու էլ տեսակ-
տեսակ զգեստ ես հագնում։ այսօր ծիրանի բե-
հեզ ես հագել, իսկ զալամքարը մնացել է տանը
ծալած (Հմմտ. յաջորդ տողը, որ ասում է.
«հաբիլիս բէհէզ ծիրանին, ծալած զալամքարը
մացցի»)։

2. ԱԼ. երգի Բ տան մէջ կարդում ենք.
Օսկէ վարազով վարազնած սուրաթ, մագա-
ղաթըն դուն իս։ Այս կէտաղրութեամբ՝ տողն
երկու իմաստով կարելի է հասկանալ. . . ով
ոսկէ վարազով վարազնած պատկեր, դու մա-
գաղաթն ես։ Դու ոսկէ վարազով վարազնած
պատկեր ես, դու մագաղաթ ես։ Երկուսն էլ
անյարիր պատկերներ եւ բացատրութեան
ձեւեր են։

Կարծում ենք, որ այս տողը պէտք է
տպագրել առանց ստորակէտի, որով այն իմաստը
կը ստանանք թէ «դու ոսկէ վարազով վարազնած
սուրաթ մագաղաթ ես», այսինքն նկար ունեցող
մագաղաթ ես, մագաղաթի նկարէն էջ ես։
Յայտնի է, որ լնտիր ձեւագիրները զարդանկար
էջեր ունին։ «Սուրաթ մագաղաթ», ասութիւնը
նման է «անձրեւ գիշեր», «ամպ օր», ասութեան,
այսինքն՝ անձրեւով գիշեր, ամպով օր, հե-
տեւապէս սուրաթով մագաղաթ։

3. ԱՅ. երգի վերջին տան մէջ կարդում
ենք. Շուռ երիտ չարխ ու փալագն դովլաթն,
միջնից խոօվ ա։ Նախ պէտք է տպագրել «շար-
ել փալագն», քանի որ բառը պարսկերէն է
մակար շար եւ նշանակում է երկնքի անիւ, իսկ
փոխարերաբ՝ նաեւ բախտ։ Թէեւ բառերն
երկու են, բայց մի գաղափար են արտայայտում,
այդ պատճառով բայերը եղակի թւով են —
«շուռ երիտ», «խոօվ ա։»։ Այդ բառերի ան-
ջատ գրութեամբ՝ տողն այս իմաստն է ստանում
թէ դովլաթ շուռ տողները եղած են եւ չարիս
եւ փալագն, ինչ որ անիմաստ է քերականորէն։
Գալով կէտաղրութեան եթէ եղածը թողնենք,
տողն այն իմաստը կունենայ, թէ «բախտը շուռ
տւեց հարստութիւնը, նա (բախտը) մեզնից խոօվ
է»։ Մեկը գիտենք, որ Սայաթ-Նովան երկեր
գովլաթի տէր եղած չէ, որ բախտը կարենար
շուռ տալ նրա գովլաթը։ Միւս կողմից հայե-
րէն եղանին խորթ է «դովլաթը շուռ տալ», ասու-

¹ Սայաթ-Նովանի բնագրի տաղամաշափական թերիների
մասին ժամանակին դրած եմ Թիֆլիսի «Հորիզոն» թերթի
մէջ որբան յիշում եմ, այս տողն այն ժամանակ դրակել
էր աշքից։

թիւնը։ Մեզ թւում է, որ այս տողը պէտք է գրել եւ կէտադրել այսպէս։

Շուռ էրիտ չարխը փալագն, դովլաթը մեզնից խոռված ա։ Այսինքն՝ “երկինքը շուռ տուեց անիւը, հարստութիւնը մեզանից խոռվէ է”, Սայաթ-Նովան հարուստ չի եղած, բայց հարստութիւնը երբեմն բարեկամէ եղած Սայաթ-Նովային։ Թիֆլիսի ունեւոր դասը, Վրաց արքունիքն ու իշխանները հրաւիրում էին նրան նուագելու։ “Շուռ եկաւ բախտի անիւն, ասում է։ հարստութիւնը (իմա ունեւոր եւ իշխան դասը) խոռվէ ինձանից, Որ այս է տողի բուն իմաստը՝ կարելի է տեսնել նրան անմիջօրէն յաջրդող տողից։ “Ում հագին հին շալ ին տեսնում, էլ չին ասում թէ էս ո՞լ ա”,

4. Այս երգի և տան մէջ տպուած է. Երեսիդ խալըն ծածկում է մազերըդ, խափանդ իս անում. “խափանդ”, բառը հրատարակչէ ասելով պարսկերէն է եւ նշանակում է “ծածկոց”, (տես ծանօթութիւն, էջ 140)։ Եղած կէտադրութեամբ՝ տողի վերջին խօսքն անիմաստ է. ի՞նչ է նշանակում “ծածկոց ես անում”, իսկ տողի առաջին մասի բայն ու ենթական անհամաձայն են թուով։ — “Մազերդդ ծածկում է երեսիդ խալը, ծածկոց ես անում”, այս անիմաստ տողի փոխարէն շատ իմաստալից պատկեր կը ստանանք եթէ տողն այսպէս կէտադրենք։

Երեսիդ խալըն ծածկում է մազերդ խափանդ իս անում. “խափանդ”, թիֆլիսի բարբառը բառով նշանակում է մուկ բրնելու թակարդ, ականաթ, ինչպէս կասեն ու կը հնչեն թիֆ-ականաթ, ինչպէս կանայք մազերը երկու տելիսցիները։ Թիֆլիսի կանայք մազերը երեսակ էին հիւսում. վզի վրայով իշնում էին երեսակ էին հիւսերը, իսկ քունքերից կախում էին կու հիւսերը, որ շըջանակում էին դէմքը։ Պարի կաւիլները, որ շըջանակում էին դէմքը կաւիլ կամ գլուխն արագ շըջած ժամանակ՝ կաւիլ ները՝ որ կախ են, շարժում են ականչից դէպի այտը եւ յետ դառնում. բնական է, որ այդ շարժման ընթացքին որոգայթի պէս ծածկէն այտի ծինը (խալը)։ “Մազերդ, ասում է բանասական անգամ, որոգայթ ես դարձնում, որ ծածկում է դէմքիդ իսալը։” Սոյնանամն մի պատկեր է եւ նոյն հատուածի Դ տողը, որ ասում է։

Ակոէքը օսկումն շարած, պոօշըդ մահանգիս անում. “մահանգ”, նշանակում է փորձար, շըժունքը քսուում է պայծառ լոդին, ինչպէս մահանգը՝ ոսկուն։

5. Ժէ երգի Բ տան մէջ կարդում է անիմաստ է անական ինձի, սպանէ, մի ասի բիշխանդ իս արի։

Այս կէտադրութեամբ՝ տողն անիմաստ չէ. բայց շատ աւելի եռանդուն կը լինէր արտայայ-տութիւնը, եթէ այսպէս կէտադրէինք. Տնը դանակն, ինձի սպանէ. մի ասի՝ բիշխանդ իս արի։ Առաջին ձեւով՝ տողի միտքն այն է թէ “Զարկ դանակն ինձ, սպանէ. մի ասի թէ ծալը ես արելու, երբ ասում է. “Զարկ դանակն ինձ,” — զարկելու հիտեւանքը կարող է մահ լինել, ուստի արտայայտութիւնը թշլլ է։ Բայց երբ ասենք. “Զարկ դանակը”, եւ անորոշ հարցումը թէ՝ “ում” — լուսաւորենք անսպասելի “ինձ սպանէ”, ասութեամբ, այն ժամանակ արտա-յայտութիւնն աւելի զօրաւոր կը դառնայ։

6. Խօն երգի երկրորդ տան մէջ կարդում ենք. Գողալ Աստած քիզի լավ տայ։ Պարզ է, որ ոչ թէ Գողալ Աստածն է, որ պիտի լաւ տայ, այլ Աստած Գողալին պիտի լաւ տայ, ուստի պէտք է “գողալ”, բառը ստորակէտով բաժնել իրը կոչական։

7. Լթ. Երգի Ա տան մէջ կարդում ենք. Բըլբուլին լալօվ ման կօծիս գիշեր ցէրէկ խարիդ էրնէկ. այս տողը՝ առանց կէտադրութեամն երկի-իմաստ է. կարելի է հասկանալ այն մատով թէ. “Բըլբուլին գիշեր ցերեկ լալով ման ես ածում, երանի քո խարին (փշին). կարելի է հասկանալ եւ այսպէս. “Բըլբուլին լալով ման ես ածում, երանի քո խարին գիշեր ցերեկ”, Այս տողը պէտք է կէտադրել առաջին իմաստով. “Բըլբուլին լալով ման կօծիս գիշեր ցէրէկ, խարիդ էրնէկ”,

8. ՃԱ Երգի Բ տան մէջ կարդում ենք. Իսկի չիս գալի, չիս ասում. “Աշաբ ի՞նչ է բանդահալու”, “բանդա, նշանակում է գերի, կալա-նաւոր (պարսկ. օձ) եւ կոչական է այստեղ, ուստի պէտք է ստորակէտների մէջ առնել. իմաստն այն չէ թէ “ի՞նչ է գերի վիճակդ”, այլ այն թէ “գերի, ի՞նչ է վիճակդ”,

9. Խօն երգի կրկնակն այս կէտադրութիւնն ունի. մնատ բաղզէն նազով, քիզ գովիմ սազով, եար իլթիմազով. այս կէտադրութեամբ “իլթի-մազով”, բառը եարի ածականն է եւ այնպիսի կապակցութիւն է, ինչպէս եթէ ասէինք. “չար սաւով եար”, “բոյով եար”, եւ այն։ “իլթի-մազ”, նշանակում է “աղաչանք, չայցուած, միջնորդութիւն”, ինչպէս ասում է Հալսվերդեանն իր ծանօթութեան մէջ (տես էջ 49)։ Աերի արտայայտութիւնը պէտք է ուրեմն նշանակէր. “աղաչանքով եար”, “հայցւածով եար”, միջնորդութեամբ եարի, որ անիմաստ է։ Այդ տողը պէտք է այսպէս կէտադրել. մնատ բաղչէն նա,

զով, քեզ գովիմ սազօվ, եար, իլթիմազօվ. որով “իլթիմազօվ”ը կը դառնայ մակայ եւ տողն այն իմաստը կը ստանայ թէ. “եար, մտիր պարտէզ, քեզ գովիմ աղաշելով, թոյլտուռթիւն հայցելով գովիլու համար: “իլթիմազօվ”ն այստեղ ճիշտ նոյն իմաստն ունի, ինչ որ Ե երգի առաջին տողի մէջ. Մի խօսկ ունիմ իլթիմազօվ, անդամ արա, օվ աչկիլու:

10. ԽԳ երգի Ա տան մէջ կարդում ենք. Դիվանա Փահլուկ կու շինիս, տէսնողին՝ ջազա իս, ազիզ. Այս կէտադրութեամբ՝ տողի միտքն այն է, թէ. “տեսնողի համար դու պատիժ ես, ազիզ”. Նոյն մտքի շատ աւելի յաջող երանդը կը ստանանք, եթէ այդ տողն այսպէս կէտադրենք. Դիւանա Փահլուկ կու շինիս տեսնողին՝ ջազա իս, ազիզ.

11. ԺԷ երգի Գ տան մէջ կարդում ենք. Պոօչէմէդ միզը է կաթում, թօղնիս՝ եախէդ թաց կուլի. Գարնան շնչի նման՝ կարմիր վարթի հիդ, բաց կուլի. Այս կէտադրութեամբ՝ երկորդ տողը ենթակայ չունի եւ անիմաստ է: Պէտք է նախորդ տողը ստորակէտով վերջանայ, քանի որ շըմունքն է կարմիր վարդի հետ բացւում եւ հիւթեղ դառնում. ուստի երկորդ տողի մէջ եղած կէտադրական նշաններն էլ պէտք է վերացնել:

12. ԽԶ երգ, Գ տողի մէջ կարդում ենք. Ինչ աչկ քիզ խայեան մըտիկ տայ. ջառում եար կուր իմ ասի. պարզ է, որ “ջառում եար, բառը, իր կոչական, պէտք է ստորակէտների մէջ առնուին:

ԺԷ երգի առաջին տան մէջ կարդում ենք. Բըլբուլի պէս պըտուտ էկայ՝ վարթի վրայ ձէն տալով, Այս կէտադրութեամբ՝ տողն անիմաստ չէ, ասում է՝ “սոխակի պէս պայտ եկայ, վարդի վրայ ձայն տալով” (երգելով): Խնձ թւում է, որ շատ աւելի ճիշտ պատիքը տուած կը լինեինք, եթէ կէտադրէինք այսպէս. “Բըլբուլի պէս պտուտ էկայ վարթի վրայ, ձէն տալով”, առաջին ձեւով՝ սոխակի նման պտոյտ է գալիս եւ վարդի վրայ ձայն է տալիս, իսկ երկորդ ձեւով՝ վարդի վրայ պտոյտ է գալիս եւ սոխակի նման ձայն է տալիս: Որ պատիքը մեր առաջարկած ձեւն է Սայաթ-Նովայի յղացածը, այդ երեւում նաեւ ԽԳ երգի Դ տանից, ուր նա ասում է. “Թուղ վըրէդ լալով պըտուտ գամ” վարթի կարօտ բըլբուլի պէս:

14. Նոյն ԺԷ երգի Գ տան մէջ կարդիր բըլբուլի լաց կուլի: Մուրվաթ չունիս, պտուտ գու քայ բազի վրայ ճըկճըկալով. Առաջին տո-

ղե ստորակէտը պէտք է փոխարինել բութով, քանի որ միտքն այն է թէ՝ “ինչ օգուտ է այդեպանիդ, որ տարագիր սոխակը լաց է լինում”՝ Խսկ երկրորդ տողի սկիզբը ոչ թէ հաստատական, այլ հարցական է ըստ իս: “Մուրվաթ բառը հասկանալով իրը “գութ”, “ողորմածութիւն”, հակադրաբար “բէմուրւաթ”, բառին, որ նշանակում է “անգութ”, “անողորմ” (տես ծանօթ, էջ 63), պէտք է այդ բառը հարցականով տպագրել. “Մուրվաթ չունիս. պտուտ գու քայ բազի վրայ ճըկճըկալով”, այսինքն՝ “գութ չունիս, չես տեսնում, որ պտոյտ է գալիս պարտէզի վրայ ճըկճըկալով”:

ՄԻ ԴԻՄՈՂՈՒԹԻՒՆ ԵԼՈՒ

Գ. Հախվերդեանը ԺԷ երգի ծանօթութեան մէջ խօսելով այն մասին, որ հին ժամանակ թիֆլիսի աղջիկները կանաչ քօշեր էին հագնում ոսկի կամ արծաթ նալով, բերում է աշուղական խաղերից երկու հատուած. մէկը Շամչի Մելքոնի տաղից, միւսը՝ Սայաթ-Նովայից առնելով, որ այս ձեւն ունի:

Հափէլ է սաղքի քօշերըն, կրունգն էրծլթի նալ է գրցի: Թէ Սայաթ-Նովայի մը երգից է առնուած այս տողը մեզ յայտնի չէ. իր հրատարակած երգերից եւ ոչ մէկի մէջ այս տողը չկայ. չկայ նաեւ այն ութ երգերի մէջ, որ Գ. Աստուածատրեանը գտել է ղետրոգրադի գիտութեանց ձեմարանի մի ձեռագրի մէջ եւ լոյս է ընծայել “Ազգագրական հանդէսի Տ գրքում (1903) (տես նոյն տաղերի արտատպութիւնը Սայաթ-Նովայի երգերի թիֆլիսի հրատարակութեան մէջ, էջ 93—101). Կամ այս հատուածն առնուած է Սայաթ-Նովայի մի երգից, որ Հախվերդեանը մոռացել է հրատարակել իր ժողովածուի մէջ, կամ Սայաթ-Նովայի անունն այստեղ թիւրիմացութիւն է. Հաւանականն այս վերջինն է, քանի որ այդ տողն իր վերլուծական կազմով գոեհիկ մտածութեան արդիւնք է եւ անկարելի է համարել իրը Սայաթ-Նովայի համագրող տաղնդի գործ:

Մուժումբար, 1923, Օգոստ.

Ն. ԱԶՐԱՄԵԱՆ

